ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

8 նոյեմբերի 2013թ. թիվ 281-Ա

Վ. ՍՈԽԱԿՅԱՆԻ ՀԵՏ ԿՆՔՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 109 հոդվածի 1-ին կետի 3-րդ ենթակետի, 112 և 130 հոդվածների, ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին կետով և 16-րդ հոդվածի 3-րդ կետի «ա» ենթակետով, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետով, հաշվի առնելով Վ.Սոխակյանի դիմումը՝

Որոշում եմ.

1. Վահան Սոխակյանին ազատել «ՀՀ Լոռու մարզի Ծաղկաշատի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի գործադիր տնօրենի պաշտոնից՝ 2013թ. նոյեմբերի 8-ից լուծելով նրա հետ 2011 թվականի դեկտեմբերի 28-ին կնքված աշխատանքային պայմանագիրը:

2. «ՀՀ Լոռու մարզի Ծաղկաշատի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի հաշվապահին՝

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Վահան Սոխակյանի հետ կատարել վերջնահաշվարկ:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

2013թ. նոյեմբերի 8
ք.Վանաձոր